

**Դիպլոմային  
(ավարտական) աշխատանքների կանոնակարգ**

**Ընդհանուր դրույթներ**

Դիպլոմային (ավարտական) աշխատանքը ուսուցման ամփոփիչ փուլն է.

ՎՊՄԻ-ում դիպլոմավորված հիմնական կրթական ծրագրով սովորողները դիպլոմային աշխատանք են կատարում միայն ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կրթական բլոկի առարկաներից: Դիպլոմային աշխատանք կատարելու իրավունք են ստանում մասնագիտացման առարկաներից միայն “4” և “5” գնահատականներով սովորողները:

1. Դիպլոմային (ավարտական) աշխատանքները կարող են լինել կոմպլեքսային և ոչ կոմպլեքսային: Դրանք կարող են ունենալ հետևյալ տարբերակները.

I. Կոմպլեքս աշխատանք, որը ներառում է նաև հիմնահարցի մանկավարժահոգեբանական հետազոտություն, նորարարական մեթոդական լուծում և ուսումնական պլանի II և III բլոկների առարկաների բովանդակային մաս, որի հիման վրա մշակվում է մեթոդային երաշխավորություն:

II. Կոմպլեքսային աշխատանք, որը ներառում է II և III բլոկների առարկաներից որևէ գծով հետազոտություն, նորարարական մեթոդական մշակումներ՝ հոգեբանամանկավարժական հիմնավորվածությամբ, պրակտիկայի ընթացքում դրանց կիրառմամբ:

III. Ոչ կոմպլեքս աշխատանք, որտեղ հետազոտվում են կա՛մ մասնագիտական առանձին գիտաճյուղեր, կա՛մ հոգեբանամանկավարժական առարկաներ:

Ծանոթություն: I տարբերակով ընտրված ավարտական աշխատանքի դեպքում ուսանողը հանձնում է հիմնական և լրացուցիչ մասնագիտության համար նախատեսված պետական քննությունները, II տարբերակի դեպքում պետական քննություն են հանձնում հոգեբանամանկավարժական առարկաներից (մանկավարժություն, հոգեբանություն, մեթոդիկա) և լրացուցիչ մասնագիտությունից, III տարբերակի դեպքում՝ հոգեբանամանկավարժական առարկաներից և լրացուցիչ մասնագիտությունից:

2. Կիրառական, բնական գիտությունների ուղղությամբ կատարվող աշխատանքները պետք է ունենան փորձարարական մաս և արդյունքների քննարկում:

3. Բակալավրի և մագիստրոսի հիմնական կրթական ծրագրով սովորողների համար ավարտական որակավորման աշխատանքները պարտադիր են:

3.1. Դիպլոմային (ավարտական) աշխատանքը նպատակ ունի.

- ✓ մասնագիտական տեսական և գործնական գիտելիքների խորացման, համակարգման և ընդլայնման,
- ✓ կոնկրետ գիտական, տեխնիկական և արտադրական (մանկավարժական) խնդիրների լուծման ժամանակ դրանց կիրառման,
- ✓ ինքնուրույն աշխատանքի հմտության զարգացման,
- ✓ հետազոտական աշխատանքների մեթոդիկայի տիրապետման և կոնկրետ խնդրի լուծման ընթացքում կիրառման,
- ✓ ժամանակակից դպրոցում, գիտության, մշակույթի տարբեր բնագավառներում ինքնուրույն աշխատանքի նախապատրաստվածության վերհանման:

3.2. Դիպլոմային (ավարտական) աշխատանքների ծավալին, բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները տարբեր են՝ պայմանավորված հիմնական կրթական ծրագրով:

3.3. Դիպլոմային աշխատանքների բովանդակությանը, կառուցվածքին, ձևին և ծավալին ներկայացվող պահանջները ամրակայվում են ֆակուլտետների կողմից մշակված մեթոդական ցուցումներով, որոնք պետք է խիստ համապատասխանեն տվյալ մասնագիտացման պետական չափորոշիչներին:

3.4. Դիպլոմային (ավարտական) աշխատանքների մեջ տեղ գտած հղումների, տեղեկությունների, հիմնավորումների և եզրակացությունների համար իրավական և բարոյական պատասխանատվություն կրում է միայն աշխատանքի հեղինակը:

### **Մասնագետի ավարտական աշխատանք**

2. Դիպլոմային (ավարտական) աշխատանք

2.1. Դիպլոմային (ավարտական) աշխատանքը կատարվում է ուսուցման ողջ գործնառնությամբ ձեռք բերած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների հիման վրա:

2.2. Դիպլոմային աշխատանքը կատարվում է վերջին երկու կիսամյակների ընթացքում, վերջին կիսամյակում՝ ակադեմիական ծրագրի ավարտից հետո տրվում է չորս շաբաթ ժամանակ՝ ամփոփելու և վերջնական տեսքի բերելու համար:

2.3. Դիպլոմային (ավարտական) աշխատանքը ինքնուրույն հետազոտություն է, կարող է ներառել տեսական հարցեր, կոնկրետ հիմնախնդիրներ, ինչպես նաև կիրառական և ստղծագործական խնդիրներ՝ պայմանավորված մասնագիտության կամ տվյալ գիտաճյուղի առանձնահատկությամբ. Մանկավարժությունից և մեթոդիկաներից կատարվող աշխատանքները պետք է անպայմանորեն ունենան լաբորատոր մաս:

2.4. Դիպլոմային (ավարտական) աշխատանքների թեմաները մշակվում են ամբիոններում և հաստատվում ֆակուլտետի խորհրդում՝ 8-րդ (դիպլոմավորված մասնագետի հիմնական կրթական), 6-րդ (բակալավրի հիմնական կրթական ծրագիր) և 2-րդ (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիր) կիսամյակների վերջում:

Ուսանողներին իրավունք է վերապահվում հանդես գալու թեմայի առաջարկությամբ՝ ծանրակշիռ հիմնավորում ներկայացնելու պայմանով:

2.5. Ամբիոնի առաջարկով, ֆակուլտետի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով ամբիոնի պրոֆեսորներից և դոցենտներից նշանակվում են ղեկավարներ:

Ղեկավար կարող են նշանակվել նաև այլ հաստատությունների և գիտահետազոտական հիմնարկությունների՝ տվյալ բնագավառի բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

2.5.1. Թողարկող ամբիոնը դիպլոմային (ավարտական) աշխատանքների կատարման համար մշակում է մեթոդական ցուցումներ:

2.5.2. Դիպլոմային (ավարտական) աշխատանքի ղեկավարը

- ✓ տալիս է դիպլոմային (ավարտական) աշխատանքի հանձնարարություններ,
- ✓ ուսանողի հետ կազմում է աշխատանքի կատարման ժամանակացույց (մեկ տարվա աշխատանքի համար),
- ✓ տալիս է հանձնարարականներ աշխատանքի աղբյուրների, գրականության, այլ անհրաժեշտ պայմանների վերաբերյալ,
- ✓ պարբերաբար անցկացնում է խորհրդատվություն,
- ✓ ստուգում է կատարած աշխատանքը՝ համաձայն ժամանակացույցի:

2.6. Ղեկավարի առաջարկությամբ ամբիոնը իրավունք ունի աշխատանքի տարբեր բաժինների համար խորհրդատուներ հրավիրել այլ ամբիոններից կամ հաստատություններից:

2.7. Դիպլոմային (ավարտական) աշխատանքը կատարվում է բուհում: Բուհը պարտավոր է ուսանողին ապահովել աշխատանքի համար անհրաժեշտ համապատասխան աշխատանքային տեղով, լաբորատոր սարքավորումներով, բարձր տեխնոլոգիաներով, անհրաժեշտ գրականությամբ:

2.8. Դիպլոմային (ավարտական) աշխատանքը ամբիոն է ներկայացվում պաշտպանությունից տասը օր առաջ:

2.9. ՌԻ-սանոդի կողմից ստորագրված ավարտված աշխատանքը ներկայացվում է ղեկավարին: Հավանության արժանանալուց հետո այն ստորագրվում և գրավոր կարծիքի հետ միասին ներկայացվում է ամբիոնի վարիչին: Կարծիքի մեջ պետք է բնութագրվեն աշխատանքի բոլոր բաժինները:

Ամբիոնի վարիչի որոշմամբ աշխատանքի գրախոսող է նշանակվում ամբիոնի առաջատար դասախոսներից, բաժնի այլ ամբիոններից (հարակից) կամ գիտական այլ հիմնարկություններից,

Այդ նյութի հիման վրա ամբիոնի վարիչը թույլ է տալիս աշխատանքը պաշտպանել՝ կատարելով համապատասխան գրառում:

2.10. Պաշտպանությունից հետո դիպլոմային աշխատանքը պահպանվում է գրադարանում:

### **Դիպլոմային (ավարտական) աշխատանքների պաշտպանության հայտերի ձևակերպում.**

Դիպլոմային (ավարտական) աշխատանքի պաշտպանության հայտը պետք է տրվի պաշտպանությունից տասը օր առաջ: Այն պետք է ներառի.

- ✓ Բուհի լրիվ անվանումը, որտեղ կատարվել է աշխատանքը,
- ✓ գիտական ղեկավարի անուն-ազգանուն-հայրանունը՝ գիտական աստիճանի և կոչման նշմամբ,
- ✓ դիպլոմային (ավարտական) աշխատանքի թեման,
- ✓ աշխատանքի ռեֆերատը (համակարգչային մեկ էջ),
- ✓ դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակահատվածը,
- ✓ աշխատանքի հեղինակի ստորագրությունը և ներկայացման օրը,
- ✓ գիտական ղեկավարի ստորագրությունը,
- ✓ նախատեսվող գրախոսողի անուն-ազգանուն-հայրանունը՝ գիտական աստիճանի և կոչման նշմամբ,
- ✓ ուսանողի լուսանկարը (էլեկտրոնային տարբերակով),
- ✓ ցանկության դեպքում՝ համապատասխան ինքնակենսագրություն:

### **Դիպլոմային աշխատանքին ներկայացվող պահանջները**

1. Դիպլոմային աշխատանքի թեման պետք է լինի հստակ ձևակերպված, հիմնավորված և բավարարի ժամանակակից հետազոտական աշխատանքների մակարդակին պետք է ընձեռի ինքնուրույնություն, ստեղծագործական մոտեցման հնարավորություն:

2. Թեմայի ընդհանուր ուղղվածության փոփոխություն չի երաշխավորվում: Խիստ անհրաժեշտության դեպքում թեմայի վերջնական ձևակերպումը դեկանատ է ներկայացվում պաշտպանությունից երեք ամիս առաջ՝ ռեկտորի հրամանով ձևակերպվելու համար:

3. Դիպլոմային աշխատանքի թեման և պլանը պետք է հաստատվի թողարկող ամբիոնի նիստում տվյալ ուսումնական տարվա պետական ավարտական քննություններից 10 ամիս առաջ:

4. Դիպլոմային (ավարտական) աշխատանքի նախնական պաշտպանությունը կազմակերպում է թողարկող ամբիոնը պաշտպանությունից մեկ ամիս առաջ:

5. Աշխատանքի հեղինակին պետք է տրվի նիստի քաղվածք՝ կոնկրետ հանձնարարականներով և սխալների, թերությունների վերլուծությամբ:

### **Դիպլոմային աշխատանքի գնահատումը**

Աշխատանքի գնահատականը նշանակելիս պետք է նկատի ունենալ հետևյալ չափումները.

- ✓ աշխատանքի բովանդակությունը, հետազոտական խնդրի բարդությունը, նյութի շարադրման որակը, եզրակացությունների հիմնավորվածությունը, աշխատանքի ավարտունության աստիճանը,
- ✓ դեկավարի գնահատականը,
- ✓ գրախոսողի գնահատականը,
- ✓ պաշտպանությանը ներկայացված զեկուցման բովանդակությունը և որակը:
- ✓ հարցերին տրված պատասխանները,
- ✓ աշխատանքի ձևավորումը:

### **Աշխատանքի ձևավորումը**

1. Աշխատանքը պետք է ներկայացվի համակարգչային շարվածքով. տառատեսակի չափը 12, 1,5 միջակայքով, ոչ պակաս 50 էջ դիպլոմավորված մասնագետների հիմնական կրթական ծրագրով, ոչ պակաս 35 էջ բակալավրի հիմնական կրթական ծրագրով, 50 էջ մագիստրոսի հիմնական կրթական ծրագրով (առանց ներդիրների, հաշվարկների), հղումների տառաչափը՝ 9, միջակայքը՝ 1,3:

1.1. Աշխատանքը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

- ✓ տիտղոսաթերթը,
- ✓ վերնագիրը,
- ✓ բովանդակության ցանկը
- ✓ շարադրանքը, այդ թվում՝
- ✓ ներածությունը,
- ✓ ենթահարցերը,
- ✓ փորձարարական մասը (*ընդհանուր դրույթներ 2-ով նախատեսված*),
- ✓ եզրակացություն,
- ✓ հավելված (եթե կան գրաֆիկական աշխատանքներ, քարտեզներ և այլն),
- ✓ գրականության ցանկ:

Ծանոթություն:

1. Եզրակացությունը պետք է լինի հստակ, համառոտ: Այն չպետք է լինի շարադրանքի համառոտագրությունը, այլ պետք է արտահայտի հետազոտության ամենաէական կողմերը:

2. Փորձարարական մաս ներառող աշխատանքներում պետք է ներկայացվեն լաբորատոր բոլոր փորձերը:

Վերջինս ևս կարող է ունենալ երկու մաս՝ փորձերը և աշխատանքի էության պարզաբանումը:

3. Գրականության ցանկի հղումները. Համարակալումը պետք է լինի հաջորդական ներածությունից մինչև եզրակացություն, տեղադրվեն աշխատանքի վերջում՝ ըստ բաժինների:

### **Պաշտպանությունը**

1. Պաշտպանության ժամանակ ուսանողի զեկուցմանը հասկացվում է 12-15 րոպե ժամանակ:

2. Ջեկուցման տեքստը պետք է հստակ ներկայացնի թեմայի հիմնավորվածությունը, աշխատանքի նորարարությունը (սեփական մոտեցումները) և եզրահանգումը:

3. Փորձարարական մաս պարունակող զեկուցումները պետք է ներկայացնեն համապատասխան նյութեր (ինստիտուտը պարտավոր է ապահովել սլայդների, կրիչների և այլն օգտագործման հնարավորությունը):

4. Աշխատանքի պաշտպանության ժամանակ ղեկավարի ներկայությունը պարտադիր է: